Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/5006/02/26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու և գործի քննությունը դռնփակ անցկացնելու մասին

29 մայիսի 2026թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲ ընկերությունն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ թիվ «ԲԸԱՀԱՇՁԲ-13-8» ծածկագրով գնման պայմանագրի 24.03.2026թ. միակողմանի լուծումը և ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 02.04.2026թ. թիվ 222 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲ ընկերության ներկայացուցիչը 2026թ. մայիսի 6-ին (կապի կազմակերպություն է հանձնվել 2026թ. ապրիլի 30-ին) հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ թիվ «ԲԸԱՀԱՇՁԲ-13-8» ծածկագրով գնման պայմանագրի 24.03.2026թ. միակողմանի լուծումը և ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 02.04.2026թ. թիվ 222 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Դատարանի 2026թ. մայիսի 12-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Որոշումը ստանալուց հետո հայցադիմումը սահմանված ժամկետում կրկին ներկայացվել է դատարան:

Կրկին ներկայացված հայցադիմումը և կից փաստաթղթերը Դատավորի աշխատակազմին են տրամադրվել 2026թ. մայիսի 26-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Հետևաբար, հայցադիմումը դատարանում պետք է ընդունված համարել 2026թ. ապրիլի 30-ին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարության մասնակիցների մասնավոր կյանքի, ներառյալ՝ առևտրային գաղտնիքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ դատական վարույթը կամ դրա մի մասը կարող է անցկացնել դռնփակ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17, 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲ ընկերությունն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ թիվ «ԲԸԱՀԱՇՁԲ-13-8» ծածկագրով գնման պայմանագրի 24.03.2026թ. միակողմանի լուծումը և ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 02.04.2026թ. թիվ 222 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ և գործի քննությունն անցկացնել դռնփակ:

Հայցադիմումը համարել դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 2026թ. ապրիլի 30-ին:

Թիվ ԵԴ2/5006/02/26 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026թ. հունիսի 26-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ